

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՇԱՎԱՐՇ ԱԶԱՅԱՆ

ԱՐԳԱՐ ԹԱԳԱՎՈՐԻ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԶՐՈՒՅՑԸ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ

Բանալի բառեր – Մովսես Խորենացի, Արգար թագավոր, Թադեոս առաքյալ, Տուրիա Բագրատունի, Եդեսիա, Ադիաբեն, Ասորեստան, Արդու, պատագրոս, պասգրիբա, աշխարհածողով, գորանիստ գավառներ, Բուդ(գ)նան, Բատնա

Վարքաբանական գրույցները հայ սրբախոսական գրականության վաղագույն օրինակներից են, որոնք հայ իրականության մեջ հայտնի էին դեռևս գրերի գյուտից առաջ¹: Նման գրույցները նպատակ են ունեցել փառաբանել առանձին անհատների ֆիզիկական և հոգևոր արժանիքները, գովաբանել նրանց սխրանքներն ու նախատինքի ենթարկել նրանց հակառակորդներին²: Հայոց գրերի ստեղծումից հետո նման գրույցները ընդգրկվել են պատմագիտական երկերում: Հայ պատմիչները իրական ու պատմական հիմք ունեցող գրույցները հարստացրել են բանահյուսական պատումներով, ձևափոխել սրբախոսական կամ կրոնական կանոններին համապատասխան³ և դրանց հաղորդել գաղափարական ու քարոզչական ուղղվածություն: Նման վարքաբանական գրույց է ստեղծվել Եդեսիայի Արգար⁴ թագավորի մասին, որն ավանդել է Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» էջերում⁵:

Պատմահայրը ծանոթ է եղել գրույցի հայերեն թարգմանությանը, սակայն, որոշակի հանգամանքներից ելնելով, կատարել է մի շարք խմբագրումներ և լրացումներ: Սրանց արդյունքում ստեղծվել է Արգարին նվիրված գրույցի նոր

¹ Տե՛ս **Տեր-Ղալթյան Բ.**, Հայկական սրբախոսություն, Երևան, 2011, էջ 37-38:

² Տե՛ս **Արապյան Ա.**, Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1969, էջ 21-22:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 104:

⁴ **Արգար** ասորերեն նշանակում է «կադ»: Ըստ Մովսես Խորենացու՝ Արգար նշանակում է «աւագ այր», որը ասորերեն ու հունարեն տառադարձությամբ է դարձել Արգար: Արաբերեն տարբերակն է Աքբարը, որը նշանակում է «ամենամեծ, հզոր»: Այս անունը հիմնականում տարածված է եղել ասորիների, արաբների ու հայերի շրջանում (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 5, **Segal J.B.**, “The Blessed City”, Oxford, 1970, p. 16):

⁵ Տե՛ս **Մովսես Խորենացի**, Հայոց Պատմություն // «Մատենագիրք հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1890-1908:

տարբերակ, որն էականորեն զանազանվում է ասորական նախաօրինակից¹:

Զրույցում տեղեկությունները վերաբերում են Հայաստանի ու հարակից երկրների պետական կարգին, հասարակական հարաբերություններին, տնտեսական կյանքին²: Պահպանվել են պատմաշխարհագրական նշանակություն ունեցող կարևոր տվյալներ, պատմական անձանց մասին տեղեկություններ, որոնք ժամանակաշրջանի այլ սկզբնաղբյուրների հետ համեմատելիս թույլ են տալիս կարևոր եզրահանգումներ կատարել:

Զրույցի առանցքը Եդեսիայում քրիստոնեության հաստատումն է: Եդեսիայի Աբգար թագավորը³ իր նախարարներին ու օգնական Անանին ուղարկում է Հիսուսի մոտ խնդրելով գալ Եդեսիա և բժշկել իրեն: Հետագայում Հիսուսի պատվերով Եդեսիա է ժամանում Թադեոս (ասորական տարբերակում՝ Ադդե) առաքյալը և բուժում նրան: Դրանից հետո Թադեոսն իրականացնում է ամբողջ Եդեսիայի թագավորության քրիստոնեական դարձը⁴:

Զրույցում առկա տվյալների պատմական հիմքը բացահայտելու նպատակով անհրաժեշտություն է զգացվում դիմելու սկզբնաղբյուրների, որոնք ժամանակագրական առումով ավելի մոտ են այս իրադարձություններին:

¹ Սրանք համարվում են **տեղայնացված** կամ **ազգայնացված** զրույցներ: Վաղ միջնադարում դրանք թարգմանվել են հունարենից կամ ասորերենից և զգալիորեն հայացվել (տե՛ս **Սրաայան Ա.**, նշվ. աշխ., էջ 41, **Տեր-Ղավթյան Ք.**, նշվ. աշխ., էջ 38):

² Այս զրույցի ուսումնասիրությանը առանձին աշխատություն է նվիրել ֆրանսիացի հայագետ Օ. Կարիերը (**Carrière A.**, *La légende d'Abgar dans l'Histoire d'Arménie de Moïse de Khoren*, Paris, 1895), որը հայերեն է թարգմանվել երկու տարի անց. **Կարրիեր Ա.**, Աբգարու զրույցը Մովսես Խորենացույ Պատմության մեջ, Վիեննա, 1897: Հայագետը գլխավորապես հետազոտել է զրույցի մեջ ներկայացված քաղաքական պատմությունը և չի անդրադարձել տնտեսական ու հասարակական հարաբերություններին: Քննության չեն ենթարկվել նաև տեղանունները:

³ Խոսքը Աբգար V Ուքքամայի մասին է, որը կառավարել է Ք.ա. 4 - Ք.հ. 7 թթ. և Ք.հ. 13-50 թթ. (տե՛ս **Segal J.B.**, նշվ. աշխ., էջ 12):

⁴ Այս զրույցի ասորական տարբերակը պահպանվել է V-VI դդ. երկու ձեռագրում: Առաջինի անգլերեն թարգմանությունը իրականացրել է Վ. Կյուրետոնը, իսկ երկրորդինը, որն ավելի ամբողջական է, Գ. Ֆիլիպսը (տե՛ս **Cureton W.**, *Ancient Syriac Documents: Relative to the Earliest Establishment of Christianity*, London, 1864, **Philips G.**, *The Doctrine of Addai, the Apostle*, London, 1876): Առավելապես օգտագործել ենք Ս. Դեղումոյի կազմած ֆրանսերեն խմբագրությունը (տե՛ս *Histoire du roi Abgar et de Jésus*, traduction, introduction et notes par **A. Desreumaux**, Brepols, 1993): Այս զրույցը հայերեն թարգմանվել է հավանաբար V դ. 30-ական թվականներից հետո, երբ քրիստոնեական եկեղեցում պայքար էր սկսվել ազդեցիկ դիրք ձեռք բերելու համար: Թարգմանության գլխավոր նպատակն էր ցույց տալ հայ եկեղեցու առաքելական ծագումը և այն զերծ պահել այլ եկեղեցիների ազդեցությունից (տե՛ս **Մելքոնյան Հ.**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-V դարեր), Երևան, 1970, էջ 160, **Тер-Петросян Л.**, *Сиро-армянские литературные связи в IV-V вв.: материалы защиты докторской диссертации*, СПб.-Ереван, 2015, с. 35-36): Ղերութնա (Լարութնա) Եդեսացու Ադդեի վարդապետությունը (գործունեությունը) հայերեն հրատարակվել է 1868 թ. Վենետիկում և Երուսաղեմում. տե՛ս **Ղերութնա Եդեսացի**, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, եւ քարոզութիւնք սրբոյն Թադեի առաքելոյ, Յերուսաղեմ (XV դ. ձեռագիր) և **Լարութնայ** դիւանագիր դպրի Եդեսիոյ Թուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռն Ս. Թարգմանչաց, Վենետիկ (XII դ. ձեռագիր):

Այս առումով հատկապես արժեքավոր են անտիկ հեղինակները: Ք.հ. I դարում Եդեսիայի մասին տեղեկություններ է ավանդել Տակիտոսը: Նա նշում է, որ Եդեսիայի՝ ազգությամբ արաբ թագավոր Աբբարը (Աբգար V Ուքքամա) պարթևների արքայազն Միհրդատին ուզում էր արգելափակել իր թագավորությունում և թույլ չտալ հասնել Պարթևստան: Ի վերջո նա Միհրդատին Պարթևստան է ճանապարհում Հայաստանի լեռնային դժվարանցանելի ճանապարհներով, որտեղ նրանց է միանում Ադիաբենի արքա Իգատեսը: Անցնելով Տիգրիս գետը՝ նրանք միանում են պարթևների թագավոր Գոդերձի դեմ ապստամբած Կարենին և միասնական ուժերով գրավում Նինվե քաղաքը: Սակայն վճռական ճակատամարտում Աբբարը և Իգատեսը լքում են Միհրդատին, և վերջինս պարտվում է ու գերվում¹:

Վերոհիշյալ տեղեկություններն իրենց արձագանքն են գտել Աբգարի գրույցում: Այսպես՝ գրույցում Ասորեստան-Ադիաբենի արքա Ներսեսին գրած նամակում Աբգարը թույլատրում է Նինվեի կառավարիչ վերանշանակել Պերոզին²: Սակայն Մովսես Խորենացին չի պարզաբանում Պերոզի ինքնությունը և չի ավանդում նախորդող իրադարձությունները: Աբգարը նման հրաման կարող էր տալ, եթե գրաված լիներ Նինվեն, ինչի մասին տեղեկություն կա Տակիտոսի վերոնշյալ հատվածում: Մովսես Խորենացին, խոսելով Աբգարի նույն այդ արշավանքի մասին, հայտնում է, որ հռոմեացիները կասկածում են նրա հավատարմությանը: Իսկ Տակիտոսի տվյալներով՝ Աբգարի գործողությունները դավաճանություն են Հռոմի հանդեպ³:

Այսպիսով՝ Պատմահայր Մովսես Խորենացին և հռոմեացի պատմիչ Տակիտոսը Աբգար թագավորի արևելյան արշավանքի մասին միանման տեղեկություններ են հայտնում և լրացնելով միմյանց՝ տալիս են առավել ընդգրկուն պատկեր:

Հարկ է նշել, որ Աբգարի գրույցը բազմաշերտ է, որի զգալի մասը վերաբերում է Աբգար VIII-ին, որի օրոք Օսրոյենում քրիստոնությունը հռչակվել է պետական կրոն: Այս մասին մի շարք վկայություններ⁴ պահպանվել են մինչև IV դ. սկիզբը ստեղծված Բարդաճան Եդեսացու երկում, Աֆրիկանոսի «Ժամանակագրության» և Եդեսիայի «Ժամանակագրության» (վաղագույն խմբագրությունը հայտնի է VI դ. կեսերին կազմված օրինակով) մեջ⁵:

¹ St' u **Корнелий Тацит**, *Анналы (сочинения в двух томах)*, т. I, СПб., 1993, с. 191-192:

² Մովսես Խորենացին այս նամակը մեջբերել է Լաբուբնայի մատյանից՝ կատարելով որոշ հավելումներ (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1904):

³ St' u **Корнелий Тацит**, նշվ. աշխ., էջ 191-192:

⁴ Աբգար VIII-ի հատած բրոնզե մետաղադրամները նույնպես արժեքավոր վկայություն են Եդեսիայում քրիստոնեության ընդունման մասին: Արքայի թագին պատկերված խաչը մինչ այդ առկա չէր Եդեսիայում հատված դրամների վրա (տե՛ս նկ. 2, **Guscini M.**, *The Tradition of the Images of Edessa*, Cambridge, 2016, p. 10):

⁵ St' u **Mirkovic A.**, *Prelude to Constantine: the Invented Tradition of King Abgar of Edessa*, Nashville-Tennessee, 2002, p. 32-42:

Ասորի փիլիսոփա և պատմագիր Բարդաճան Եդեսացին (154-222), անդրադառնալով Եդեսիայի քրիստոնեական համայնքին, հայտնում է, որ իր ժամանակակից Աբգար VIII արքան դարձի գալուց հետո հրամայում է Թարատտա աստծո փոխարեն գոհաբերություն կատարել **միակ Աստծուն**¹:

Աֆրիկանոսի «Ժամանակագրությունը», որը չի պահպանվել, մեզ է հասել հետագա պատմիչների աշխատությունների շնորհիվ: Աֆրիկանոսից Աբգարի մասին տեղեկություններ է մեջբերել Եվսեբիոս Կեսարացին իր «Ժամանակագրության» մեջ² և Աբգարին անվանել է «**սուրբ մարդ**»³:

Եդեսիայի ժամանակագրությունից տեղեկանում ենք, որ Մեծ ջրհեղեղը, որը տեղի է ունեցել շուրջ 201 թ.՝ Աբգար VIII Մեծի ժամանակ, ավերել էր նաև արքայական պալատի հարևանությամբ գտնվող քրիստոնյաների եկեղեցին⁴:

«Ադդեի վարդապետության» մեջ նշվում է, որ Աբգարն իր բանագնացներին ուղարկել է Ելթերոպոլիս քաղաք, որտեղ նրանք պետք է հանդիպեին հռոմեական կառավարչին: Լաբուրնան նշում է նաև Ելթերոպոլիս քաղաքի անվան արամեերեն տարբերակը՝ Բեթ Գուրբին⁵: Վերջինս Սևերոս կայսեր կողմից Ելթերոպոլիս է անվանակոչվել 199 կամ 200 թ.⁶, և անհնար է, որ I դ. ապրած Աբգար V արքան կամ նրա քարտուղար ներկայացող Լաբուրնան տեղյակ լինեին քաղաքի հունարեն անվանը: Փոխարենը տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Աբգար VIII-ը նամակագրություն է ունեցել Ելթերոպոլիսի քրիստոնեական առաջնորդի հետ և նրանից խնդրել է քարոզիչներ ուղարկել՝ Եդեսիայում քրիստոնեություն տարածելու համար⁷: Այս վկայությունները փաստում են, որ զրույցի գլխավոր հերոսը Եդեսիայի՝ II-III դդ. ապրած նշանավոր արքա Աբգար VIII-ն է և ոչ թե Հիսուսին ժամանակակից Աբգար V-ը:

III-IV դդ. մի շարք սկզբնաղբյուրներ նշում են, որ Եդեսիայում քրիստոնեություն քարոզել է ոչ թե Թադեոս-Ադդեն, այլ Հիսուսի առաքյալ Թովմասը⁸: Հավանական է, որ Եդեսիայի լուսավորիչ Ադդեն այն անձն է, որը I դ.

¹ Տե՛ս **Bardesan**, Book of the Laws of Countries, Spicilegium Syriacum: (with Engl. Translation), Edited by Cureton W., London, 1855, p. 31, **Bakker D.**, Bardaisan c. s Book of the Laws of the Countries, Leiden, 2011, p. 39):

² Տե՛ս **Eusebius**, Chronicon, Translation by Jerom, part 2, 2005 Online Edition // http://www.tertullian.org/fathers/jerome_chronicle_03_part2.htm, p. 296:

³ Եվսեբիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մեջ Աբգարը կոչվում է «**այր ազնիվ**» (լատ. vir probus) (տե՛ս **Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ**, Ժամանակակաևք Երկմասնեայ, մաս Բ, Վենետիկ, 1818, էջ 164-165):

⁴ Տե՛ս **Bauer W.**, Orthodoxy and Heresy in Earliest Christianity, Philadelphia, 1971, p. 13:

⁵ Տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 54:

⁶ Տե՛ս **Swanson J.M.**, Ancient Maresha and Eleutheropolis (City of Free), Crawley, 2012, p. 61:

⁷ Տե՛ս **Scavone D.**, Edessan sources for the legend of the Holy grail, Frascati, 2010, p. 1:

⁸ Խոսքը առաջին հերթին վերաբերում է ուխտավորուհի Էթերի «Ժամանակագրությանը» և Եդեսիայի պարսպին արձանագրված Հիսուսի նամակին: Հռոմեական կայսրության

վերջին և II դ. սկզբին քարոզչությամբ է զբաղվել Ադիաբենում, սակայն նրա պատմությունը վերագրվել է Եդեսիային, քանզի ասորախոս այս երկրները հաճախ նույնացվում էին¹: Ընդունված է կարծել, որ Թովմաս առաքյալը քարոզել է պարթևներին, մեդիացիներին և Արևելքի այլ ժողովուրդների: Նրա մասին ստեղծված ասորական վկայաբանություններում նշվում է, որ նա քարոզել է նաև Եդեսիայում: Հավանական է, որ Ադիաբենում քարոզած Ադդեն և Թովմասը Եվսեբիոսի վկայության և մանիքեական ուսմունքի ազդեցությամբ հետագայում նույնացվել են²:

Ադիաբենը կարևոր է այլ տեսանկյունից ևս: Ըստ Հովսեփոս Փլավիոսի վկայության՝ Իգատեսը, որն Ադիաբենի արքան էր դարձել 36 թ. և Աբգար V-ի ժամանակակիցն էր, հետևելով հրեա վաճառական Անանին և իր մայր Հեդիներին³, ընդունել է **հրեական կրոնը**⁴: Սա քրիստոնեական ուսմունք էր, որն այդ շրջանում ընկալվում էր որպես հուդայականության ճյուղերից մեկը⁵:

Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ՝ Իգատեսը պարսից գահակալական կոիվների ժամանակ եղել է միջնորդ և խաղաղություն է հաստատել հակա-

արևմտյան պրովինցիաներից սերած Էթերը կամ Սիլվան IV դ. ուխտագնացության է մեկնել Պաղեստինի ու Միջագետքի մի շարք բնակավայրեր և կազմել «Ուղեգրություն» վերնագրով ժողովածուն: Ճամփորդության ընթացքում Էթերը եղել է նաև Եդեսիայում, այցելել բազմաթիվ սուրբ վայրեր: Ըստ նրա՝ Եդեսիայում էր թաղված Թովմաս առաքյալը, որին Հիսուսը ուղարկել էր այստեղ՝ քարոզելու: Ուխտավորուհին պատմում է Աբգարի պալատի, նրա և նրա որդի Մանուի արձանների մասին: Էթերը գրել է Հիսուսի և Աբգարի նամակագրության մասին, բայց տեղեկություններ չի հաղորդել սուրբ դաստառակի վերաբերյալ: Փոխարենը նա գրի է առել ավանդազրույցը Սուրբ աղբյուրի մասին, որը փրկել էր Եդեսիան պարսից զորքից (տե՛ս **Egeria: Diary of Pilgrimage** (Engl. Translation and Annotaed by Gingras G.E.), New York, 1970, p. 77-81):

Եդեսիայի մոտակայքում հայտնաբերվել է մի արձանագրություն (ամրացված է եղել քաղաքի դռներից մեկի հարևան պատին), որը ներկայացնում էր Հիսուսի պատասխան նամակը Աբգար թագավորին: Այն գրվել է V դարում (հավանաբար Ադդեի վարդապետության վերջնական ձևավորումից առաջ): Արձանագրությունից հայտնի է դառնում, որ Թադեոսը նույն Թովմասն է, որը իրականացրել է Եդեսիայի քրիստոնեացումը (տե՛ս **Segal J.B.**, նշվ. աշխ., էջ 66, 75, արձանագրությունը՝ Plate 31):

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

² Ադդե-Թադեոս-Թովմաս կապը հնարավոր է, որ հաստատվել է մինչև IV դ. առաջին քառորդը մանիքեական միջավայրում: Մանիի աշակերտներ Ադդեն և Թովմասը գործունեություն էին ծավալում նույնանուն առաքյալների քարոզչության տարածքներում: Այս հանգամանքը հետագայում կարող էր պատճառ դառնալ Ադդեի և Թովմասի նույնացման (տե՛ս նույն տեղում, էջ 65-66):

³ Ըստ Մովսես Խորենացու՝ Աբգարի կնոջ անունը Հեդինե էր, ինչը չի համապատասխանում իրականությանը: Այս տեղեկության համար նա վկայակոչում է Հովսեփոսին, որը Հեդիներին համարում էր ոչ թե Աբգարի կինը, այլ Ադիաբենի Իգատես արքայի մայրը (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1907-1908, **Հովսեփոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն (Հին հունական աղբյուրներ, հ. Ա), թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Կրկյաշարյան Ս., Երևան, 1976, էջ 80):

⁴ Տե՛ս **Հովսեփոս Փլավիոս**, նշվ. աշխ., էջ 80-88:

⁵ Տե՛ս **Մելքոնյան Հ.**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 81-87:

ռակորդ կողմերի միջև: Ինչպես տեսանք, Մովսես Խորենացին այս պատմությունը վերագրել է Աբգար թագավորին:

Փաստորեն Ադիաբենի և Օսրոյենի միջև նմանությունները հիմք են դարձել, որ պատմիչները ժամանակագրական ու տարածական փոփոխություններ կատարեն և Աբգարին վերագրեն այնպիսի գործեր, որոնք իրականում կատարել է Ադիաբենի Իգատես արքան¹: Հետագա հեղինակները, որոնք հիմնականում եղեսիական դպրոցի ներկայացուցիչներն էին, «մոռացել են» Իգատեսի մասին: Նրանց է հետևել նաև Մովսես Խորենացին: Նրանք Ադիաբենի քրիստոնեացման պատմությունը տեղափոխել են Եղեսիա և վերագրել Աբգար V-ին՝ Իգատեսի ու Հիսուսի ժամանակակցին:

Իսկ Աբգարի մասին ի՞նչ տվյալներ կան պահպանված հայկական գրույցում: Ըստ Մովսես Խորենացու՝ I դարի կեսերին Եղեսիայում իշխում էր Աբգար թագավորը՝ Արշակունյաց տոհմից, Արշամի որդին, որը ազգակից էր Արտաշես և Տիգրան Միջին հայոց արքաներին²: Աբգարի ծագումը կապվում է առաջավորասիական խոշոր արքայատոհմերին, ինչը մեծ հեղինակություն կհաղորդեր առաջին քրիստոնյա թագավորին:

Նման տեղեկություն չկա «Ադդեի վարդապետության» մեջ, որը Մովսես Խորենացու գլխավոր սկզբնաղբյուրն էր: Ղերուբնա Եղեսացին Աբգարին վերագրել է ասորական ծագում³, նրան համարելով ոչ թե Արշամի, այլ Մանուի որդին⁴: Մովսես Խորենացին արդիականացրել, հարմարեցրել է իր նախորդի տեղեկությունները և յուրովի մեկնաբանել Ղերուբնայի նկարագրած աշխարհագրական ու էթնիկական միջավայրը⁵, ինչը նպաստելու էր վարքի հանրայնացմանը և ամրապնդելու էր ինքնուրույնության ձգտող հայ եկեղեցու դիրքերը: Մովսես Խորենացու նման մոտեցումը արտաստվոր չէր և բխում էր սրբախոսական գրականության պահանջներից:

Մովսես Խորենացին Աբգար թագավորի երկու բանագնացներին՝ Մար Իհաբին և Շամշագրամին, ներկայացնում է իբրև հայ նախարարներ՝ նշելով նրանց տիրույթները. Շամշագրամը **Ապահունյաց** տոհմի նահապետն է, իսկ Մար Իհաբը՝ **Ադձնիքի** բղեշխը⁶: Այս երկու տարածքները Հարավային Հա-

¹ Տե՛ս Segal J.B., նշվ. աշխ., էջ 69-71:

² **Մովսես Խորենացի**, էջ 1889-1890:

³ Տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 53:

⁴ Հավանաբար Մովսես Խորենացին այս փոփոխությունը կատարել է Ադդեի վարքի հայերեն թարգմանության ազդեցությամբ: Եվսեբիոսի եկեղեցական պատմության հնագույն թարգմանության մեջ ևս Աբգարի հայրը համարվում է Արշամը (տե՛ս **Կարրիէր Ա.**, նշվ. աշխ., էջ 53): Հնարավոր է, որ այս տարբերակը ասորական իշխան բառի (ոհշանա) տարընթերցման արդյունք լինի (տե՛ս **Մելքոնյան Հ.**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 168):

⁵ Հայ պատմիչները հաճախ են դիմել նախորդների հաղորդած տեղեկությունները արդիականացնելու մեթոդին (տե՛ս **Մարգարեան Հ.**, Հայ պատմագրութեան բնութագրական գծերը եւ պարբերացումը // «Հանդես ամսօրեայ», 2014, թիվ 1-12, էջ 285-286):

⁶ **Մովսես Խորենացի**, էջ 1896:

յաստանում են և, հավանաբար, ասորական եկեղեցու որոշակի ազդեցության գոտում¹:

Չետաքրքրական է Ապահունյաց գավառի² մասին հիշատակությունը: Այս գավառը համարվում էր Գրիգոր Պարթևին հակընդդեմ, ասորական ուղղությունը ներկայացնող Աղբիանուսյանների տոհմական կալվածք³: IV-V դդ. տարբեր դեպքերի բերումով այս տոհմի մի քանի ներկայացուցիչներ հոչակվել են հայոց կաթողիկոսներ և դարձել Արշակունի արքաների հենարանը լուսավորչական կամ հունական կողմնորոշում ունեցողների դեմ⁴: Մովսես Խորենացին տեղյակ էր, որ եղեսիական (ասորական) կողմնորոշում ունեցողները Աղբիանուսյաններն էին⁵, ինչը ցույց է տալիս Շամշագրամին Ապահունի ներկայացնելով: Ապահունիքը հետագայում ևս եղել է հայ եկեղեցուն ընդդեմ ուժերի միջավայր: IX-XI դդ. այս գավառում էր գտնվում աղանդավորական շարժման կենտրոն Թոնդրակը⁶: Նույնը կարող ենք ասել նաև Աղձնիքի մասին, որը ևս ասորական կողմնորոշում ունեցող հոգևորականների միջավայր էր⁷:

Ասպիսով՝ Մովսես Խորենացին հայկական ծագում է վերագրում նաև Աբգարի նախարարներին: Նրանց համար Պատմահայրը մատնանշում է այնպիսի նահանգներ, որտեղ քրիստոնեությունը ներթափանցել էր Եղեսիայի ասորական եկեղեցուց և շարունակում էր մնալ այդ եկեղեցու ազդեցության ներքո:

¹ Տե՛ս **Տեր-Մինասեանց Ե.**, Հայոց Եկեղեցու յարաբերությունները ասորաց եկեղեցիների հետ, Մ. Էջմիածին, 2009, էջ 42-43:

² Ապահունիքը գտնվել է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգում: Սկզբնական շրջանում այն ընդգրկվել է Հարթ գավառի կազմում: Չետագայում հայոց թագավորները, հաշվի առնելով Հարթի նախարարների հզորացումը, որոշ գավառներ առանձնացրել են նրանից: Ապահունիքում էր գտնվում նշանավոր Մանակերտ քաղաքը (տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 2001, էջ 234, 241-242):

³ Աղբիանուսյանների հզորացումը և կալվածքների ընդարձակումը սկսվել էին Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի օրոք: Վերջինս նախկին քրմական ընտանիքի գավակ Աղբիանուսին ձեռնադրեց եպիսկոպոս Եփրատի կողմերում: Աղբիանոս եպիսկոպոսը նաև Գրիգոր Լուսավորչի փոխանորդն էր և միակ ոչ Լուսավորչական ծագում ունեցող եպիսկոպոսը, որը մասնակցեց Տրդատ արքայի Հռոմ կատարած ուղևորությանը (տե՛ս **Ագաթանգեղոս**, Պատմություն Հայոց // «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1707-1708, 1722): Խոսքով Կոտակ արքան ամրապնդում է այս տոհմի դիրքերը և Մանավազյանների տիրույթները, որոնք սահմանակից էին Եղեսիային, հանձնում է նրանց (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց // «Մատենագիրք հայոց», հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 280): Չետագայում Պապ թագավորը Ներսես կաթողիկոսի փոխարեն Սահակ Աղբիանուսյանին դարձրեց կաթողիկոս, որին փոխարինեց նրա ազգակից Զավենը (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 2059-2060, 2062): Փաստորեն մի կարճ ժամանակաշրջան՝ Պապ և Վարագդատ արքանների օրոք, Հայաստանում կաթողիկոսական գահը անցնում է Աղբիանուսյան տոհմին (տե՛ս **Աղոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 391-392):

⁴ Տե՛ս **Աղոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 383-392:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 386-393:

⁶ Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 242:

⁷ Տե՛ս **Տեր-Մինասեանց Ե.**, նշվ. աշխ., էջ 44:

Աբգարի գրույցում կարևոր տեղեկություններ կան Եդեսիայի կառավարման համակարգի վերաբերյալ: Բազմիցս նշվում է արքունի պաշտոնյաների մասին: Կարևոր նշանակություն ունեն Աբգարի առաջնային նախարարներից մեկի՝ Աբդուի մասին հիշատակությունները, որի պաշտոնը տարբեր ձևերով է նկարագրվում ասորական և հայկական վարքերում: Ասորական վարքում Աբդուն համարվում է Աբգարի բարձրաստիճան պաշտոնյաններից, արքունիքի անդամներից մեկը, որը Եդեսիա քաղաքի ղեկավարն է և արքայի աթոռակիցը¹: Ըստ ասորական վարքի՝ Աբդուն տառապում էր պաղագրոս (հողագսավ) հիվանդությունից և բուժվում Ադդեի աղոթքներով²:

Աբդուի մասին համառոտ տեղեկություններ կան հայկական գրույցում: Մովսես Խորենացին հայտնում է, որ նա Եդեսիայի իշխանն է, «և եղեալ ձեռն ի վերայ բժշկեաց զնա, և զԱբդիու պատագրոս³ իշխան քաղաքի»⁴: Մեջբերված հատվածը վկայում է, որ հայկական գրույցում «պատագրոս» բառը պաշտոնի անվանում է դարձել: Հետագայում այս բառը տարբեր կիրառություններ է գտել հայ պատմիչների երկերում⁵ և հայամավորքներում⁶: Աբդուի նշյալ լիազորությունները համապատասխանում են **պասգրիբա** պաշտոնին⁷, որը III դ. սկզբին կարևոր տեղ ուներ Աբգար VIII-ի արքունիքում⁸: Հնարավոր է՝ Մովսես Խորենացին պաղագրոսը մեջբերել է որպես պասգրիբային համապատասխան անվանում:

¹ Sté u Histoire du roi Abgar et de Jésus, p. 64, **Мещерская Е.Н.**, Легенда об Авгаре: раннесирийский литературный памятник, М., 1984, с. 186-188:

² Sté u Histoire du roi Abgar et de Jésus, p. 62:

³ Թադեի գրույցի հայերեն թարգմանությունում նշվում է, որ պատագրոսով հիվանդ Աբդուն բուժվել է Թադե առաքյալի կողմից (տե՛ս **Ղերութնա Եդեսացի**, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, եւ քարոզութիւնք սրբոյն Թադեի առաքելոյ, էջ 9, **Լարութնայ** դիւանագիր դարի Եդեսիոյ Թուղթ Աբգարու յեղեալ յասորոյն ի ձեռն Ս. Թարգմանչաց, էջ 9):

⁴ Sté u **Մովսես Խորենացի**, էջ 1899-1900:

⁵ Աբդուին որպես պաղագրոս իշխան են նշում Ուխտանեսը (տե՛ս **Ուխտանես**, Հայոց պատմություն // «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, էջ 475), Մխիթար Անեցի (տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, Երևան, 1983, էջ 84) և այլն: Միքայել Չամչյանը Աբդուին համարում է Եդեսիա քաղաքի վերակացու, որին Թադեոսը բուժում է անդամալուծությունից (տե՛ս **Միքայել Չամչյան**, Հայոց պատմություն, Երևան, 1985, էջ 290):

⁶ Աբգարի գրույցի հայամավորքային խմբագրությունների զգալի մասում Աբդուի բուժման տեսարանը դուրս է մնացել: Գրիգոր Անավարզեցու խմբագրությամբ կազմված հայամավորքում (տե՛ս Մատենադարան, ձեռագիր թիվ 7529, էջ 203-205) պաղագրոսը նշվում է որպես հիվանդություն, որով տառապում էր Տուբիա իշխանը: Գրիգոր Անավարզեցին լատինամետ էր և «պաղագրոս» բառը հավանաբար վերցրել է լատինական ժողովածուներից (տե՛ս **Ավդարեցյան Մ.**, «Յայսմաւորք» ժողովածուները և նրանց պատմագիտական արժեքը, Երևան, 1982, էջ 79):

⁷ Sté u **Segal J.B.**, նշվ. աշխ., էջ 19:

⁸ Sté u **Gnoli T.**, ‘Pasgribā’ at Hatra and Edessa // Ideologies as Intercultural Phenomena: Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project Held in Chicago, USA, October 27-31, 2000, Milano, 2002, p. 79-87:

Զրույցում արժեքավոր տեղեկություններ կան Եդեսիայի հասարակական հարաբերությունների մասին: Հելլենիստական պետությունների կառավարմանը հատուկ էր քաղաք-պետությունների միջև միությունը՝ միաձուլումը մեկ պետության (սինոկլիզմ)¹ մեջ: Վաղքրիստոնեական քարոզիչների կարևոր խնդիրներից էին քրիստոնեական գաղափարների ու գործող հելլենիստական համակարգի միջև առնչությունների ստեղծումը, եղած հակասությունների մեղմացումը: Այս առումով վաղքրիստոնեական պատմագիր-սրբախոսները հիմնականում հաշտության եզրեր էին փնտրում երեք խավերի՝ քրիստոնյա ազնվականության, տեղական ու կենտրոնական կառավարչական մարմինների ու բարձրաստիճան հոգևորականության միջև²:

Եդեսիայի թագավորության նմանատիպ կառուցվածքը ակներև է «Ադդայի վարդապետությունում»: Այստեղ Եդեսիայի կողքին նշվում են Խառան ու Մծբին քաղաքները³, որոնք ևս մասնակցում են բախտորոշ քննարկումներին և առանձնահատուկ տեղ ունեն թագավորության կյանքում: Համադրելով գրույցի տարբերակները՝ կարող ենք ասել, որ Օսրոյենի թագավորության համար առաջնայինը մայրաքաղաք Եդեսիան էր, որի կառավարիչը նաև թագավորության երկրորդ դեմքն էր և արքայի աթոռակիցը:

Այս տեղեկությունները դուրս են մնացել հայկական գրույցից, ինչը բացատրվում է նրանով, որ գրույցի ձևավորման ժամանակ տիրապետող էր ավատատիրական հասարակարգը, և տարբեր խավերի միջև միջնորդ ներկայանալուց բացի՝ պետք էր ընդգծել եկեղեցու առաջնային տեղը: Այս շրջանում ավելի կարևոր էր եկեղեցու և արքայական իշխանության հավասար ու անձեռնմխելի իրավունքների ներկայացումը:

Այսպիսով՝ հայկական գրույցում Աբգարը փառաբանվում էր և ներկայացվում իբրև իմաստուն ու զորեղ միապետ: Նրա նախարարները նույնպես բարեպաշտ են, բայց **հավասար չեն** Աբգարին: Երբ Թադեոսը Տուրիայի ուղեկցությամբ մտնում է թագավորական պալատ, միայն աստվածընտրյալ Աբգարն է հասկանում նրա հրաշագործ գործությունը⁴, մյուս իշխանները անհաղորդ են սրան: Առաջնայինը Աբգարի և Թադեոսի միջև հաստատվող հարաբերություններն են: Ակնհայտ է, որ այս երկու անձինք խորհրդանշում են թագավորական ու եկեղեցական իշխանությունների սրբազան, անձեռնմխելի (լատ. *sacrare*) բնույթը: Թադեոսը իր գործունեության շնորհիվ ստեղծում է հասարակական նոր հարաբերություններ, որտեղ նա և՛ քարոզիչ է, և՛ միջնորդ:

¹ Տե՛ս **Тарн В.**, Эллинистическая цивилизация, М., 1949, с. 80, **Boehm A.**, Synoikism, Urbanization, and Empire in the Early Hellenistic Period, Berkeley, 2011, p. 11:

² Տե՛ս **Camplani A.**, Traditions of Christian Foundation in Edessa: Between Myth and History // “Studi e materiali di storia delle religioni”, 75:1, 2009, p. 253-254:

³ Տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 76:

⁴ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1900:

Ի տարբերություն Լաբուրնայի՝ Մովսես Խորենացին չի նշում Թադեոսի կողմից լայն զանգվածների մկրտության մասին: Նրա պատումից բազմությունը դուրս է մղվել: Եթե Լաբուրնան գրում է, որ բազմությունը Աբգարի հրամանով հավաքվեց հրապարակում, որպեսզի հաղորդակցվի Թադեոսի հետ, ապա Մովսես Խորենացին այս սյուժեն դուրս է թողել իր պատմության էջերից: Լաբուրնայի պատումը հելլենիստական կառավարման օրինակ է. հիմնական հարցերը լուծվում են **աշխարհածողովի** միջոցով¹: Կարևոր է **հրապարակի** դերը, որը հասարակական խմբերի միջև երկխոսության յուրատեսակ հարթակ էր²:

Մովսես Խորենացու ժամանակ ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով «**բազմությունը**» կորցրել էր վճռորոշ դերը, ինչի պատճառով հայկական գրույցից դուրս են մնացել վերոնշյալ հատվածները, քանի որ V դարում դրանք այլևս կարևորություն չունեին:

Մովսես Խորենացին Աբգարի մասին գրույցում անդրադարձել է նաև քրիստոնյաների համար **մերժելի կառավարչի** կերպարին: Այս դերում հանդես է գալիս Աբգարի Անանուն որդին: Նա վերաբացում է մեհյաններն ու սկսում հալածել քրիստոնյաններին: Նրան ընդդիմանում է Թադեոսի հաջորդը՝ նախկին խույրագործ Ադդեն³, որը հրաժարվում է խույր գործել արքայի համար⁴ և սպանվում նրա կողմից⁵: Այսպիսի արքաները անընդունելի են քրիստոնյա պատմիչների համար և ըստ սրբախոսական սյուժեի՝ արժանանում են Աստծո պատժին:

Աբգարի գրույցում տեղեկություններ են պահպանվել նաև Եդեսիայի բնակչության էթնիկական ու կրոնական կազմի մասին: Մովսես Խորենացին կարևոր տեղեկություններ է փոխանցում քաղաքի հրեական համայնքի մասին, որն առևտրի հիմնական կազմակերպիչն էր: Հռոմեա-պարթևական պատերազմների ժամանակ հրեաները հիմնականում անցնում էին հաղթողների կողմը⁶:

¹ Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության հետազիծը, Երևան, 2014, էջ 53:

² Տե՛ս նույն տեղում, էջ 342:

³ Ասորական պատմության մեջ որպես Ադդե-Թադեոսի հետնորդ հանդես է գալիս կերպասագործ Ազգեն (Ազայ) (տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 10):

⁴ Ադդեի և Անանունի հակամարտության սյուժեում որոշակի նկարագրություն կա Եդեսիայի արքայական խույրի (թագի) մասին: Ի տարբերություն Լաբուրնայի՝ Մովսես Խորենացին նշում է, որ բացի ոսկեթելերով հյուսված լինելուց՝ այն պատրաստվում էր բեհեզե կտորից: Պատմահոր նկարագրությունը նման է Եդեսիայում հայտնաբերված Աբգարի խճանկարին (նկ. 1), որում Աբգարն ու որդիները պատկերված են փռուզիական խույրով (տե՛ս **Salman B.**, Family, Death and Afterlife According to Mosaics of the Abgar Royal Period in the Region of Osroene // “Journal of Mosaic Research”, 2008, vol. 1/2, p. 108-109):

⁵ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1906:

⁶ Նման դեպքի հանդիպում ենք Տրայանոսի արշավանքների ժամանակ: Սկզբում հրեաները համառ դիմադրություն են ցույց տալիս հռոմեացիներին, իսկ հետո, երբ Աբգար VII թագավորն անցնում է պարթևների կողմը, Եդեսիայի հրեաները Տրայանոսի հրահանգով

Ազգությամբ հրեա Տուբիան միջնորդ է ներկայանում Թադեոսի և Աբգարի միջև, նաև նրա տանն էր հանգրվանել Թադեոսը: Սա ցույց է տալիս քրիստոնյա քարոզիչների ու հրեաների միջև փոխգործակցային հարաբերությունները և հրեական վերնախավի ներգրավվածությունը Եդեսիայի պետական համակարգում:

Մովսես Խորենացին Տուբիային ներկայացնում է Բագրատունյաց տոհմից¹: Նա շեշտում է, որ Տուբիան պահպանել էր հրեական կրոնը և դարձել Եդեսիայի առաջին քրիստոնյաներից մեկը: Չնայած նրա այս վկայությունը միտված է փառաբանելու Բագրատունիներին, բայց ցույց է տալիս, որ քրիստոնյաների քարոզչության «նախընտրելի» միջավայրը հրեական համայնքներն էին:

Եդեսիայի ռազմավարչական պատմության համար կարևոր նշանակություն ունի Մովսես Խորենացու այն վկայությունը, որ Աբգարի գորքերի և Հերոդոտի եղբորորդու գլխավորած բանակները ճակատամարտում են գորանիստ² **Բուդ(զ)նան** գավառում: **Ջորանիստ գավառները** գտնվում էին սահմանային գոտիներում և ունեին պաշտպանական կարևոր նշանակություն: Ըստ Մովսես Խորենացու՝ Աբգարը հռոմեացիներին առաջարկում է դեպի Պարսից աշխարհ շարժվել անապատով, մինչդեռ Հերոդոտի եղբորորդի Հովսեփը որոշում է արշավել լեռնոտ տարածքով՝ Բուդ(զ)նան գավառով: Այս ճանապարհն անցնում էր Ջևգմա³ անառիկ ամրոցի մոտով՝ Եդեսիա քաղաքից հարավ-արևմուտք, և նրա հարևանությամբ պետք է լիներ Բուդ(զ)նան գավառը⁴:

ապսամբում են նրա դեմ, ինչի արդյունքում թագավորը ստիպված հեռանում է քաղաքից (տե՛ս **Poirot J.**, *Percceptions of Classical Armenia: Romano-Parthian Relations, 70BC-220AD*, Louisiana State University, 2003, p. 60, **Segal J.B.**, նշվ. աշխ., էջ 42):

¹ Մովսես Խորենացին ամեն կերպ փորձում է Բագրատունիներին հրեական ծագում վերագրել (տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1812-1813), որպեսզի առավել փառք ապահովի իր պատվիրատու Մահակի տոհմին: Եդեսիայում ապրող հրեա Տուբիային Բագրատունի ներկայացնելը բխում էր այս մոտեցումից:

² Ջորանիստ գավառների մասին հիշատակությունները սակավ են: Ըստ Փավստոս Բուզանդի՝ սրանք այն գավառներն էին, որտեղ գորքեր էին տեղակայում և կառուցում ամրացված քաղաքներ (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, էջ 403-404):

³ Ջևգման գտնվել է ներկայիս Թուրքիայի Հանրապետության Բիրեջիկ քաղաքի մոտակայքում՝ Եփրատ գետի գլխավոր անցման մոտ, և միջագային ճանապարհների կարևոր հանգույց էր (տե՛ս **Մանանդյան Հ.**, Տիգրան Բ և Հռոմը. նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 450): Քաղաքի անունը առաջացել է հին հունարեն **ζευγμια** (զեուգմա) բառից, որը թարգմանվում է *միացում* կամ *կամրջակառույց գորանաս* իմաստով, ինչն ամբողջությամբ արտահայտում է այս ամրոցի նշանակությունը: Ըստ Դիոն Կասսիոսի՝ վայրն իր անվանումը ստացել է Ալեքսանդր Մեծի այստեղով անցնելուց հետո (տե՛ս **Dio Cassius**, *Roman History (with an Engl. translation)*, vol. III, London, 1914, p. 431):

⁴ Այս փաստի օգտին է Ստրաբոնի այն վկայությունը, որ Անտոնիոսը ևս իր պարթևական արշավանքից առաջ որոշեց անցնել Ջևգմայի լեռնային ճանապարհով (տե՛ս **Страбон**, *География*, М., 1964, с. 524):

Հռոմեացի պատմիչ Ամմիանուս Մարկելինուսը տեղեկություններ է հաղորդում Եդեսիայի Բատնա (լատ. Batnae) քաղաքի¹ մասին՝ նշելով, որ այն առևտրական կարևոր հանգույց էր²: Ըստ Ամմիանուսի՝ այս քաղաքը գտնվում էր Օսրոյենի հարավարևմտյան ծայրամասում՝ Եփրատ գետի հարևանությամբ, որից հարավ անապատ էր³: Ըստ էթերի ուղեգրության⁴՝ Բատնան բազմամարդ քաղաք էր Եփրատի մոտակայքում: Այն գլխավոր գորքերի հավաքատեղին էր և ուներ նաև ռազմական դատարան⁵:

Համադրելով այս տեղեկությունները՝ կարող ենք եզրակացնել, որ անտիկ և վաղքրիստոնեական սկզբնաղբյուրներում հիշատակվող Բատնան և Մովսես Խորենացու Բուդ(գ)նան միևնույն տարածքն են, քանի որ նրանց տեղադրությունը և նշանակությունը միանման են: Կարող ենք եզրակացնել, որ այս ռազմականացած գավառը գտնվել է Եդեսիայի հարավարևմտյան մասում և կարևոր նշանակություն է ունեցել արաբական անապատից սպասվող մշտական վտանգը չեզոքացնելու և Զևգմայի անցումը վերահսկելու համար:

Զրույցում հիշատակվում է, որ Աբգար թագավորը, բացի հռոմեական կայսր Տիրերիոսից, նամակագրական կապեր է ունեցել նաև Ասորեստանի և Պարսկաստանի արքաների հետ: Հայկական գրույցի տվյալներով՝ Ասորեստանի մանկահասակ արքա Ներսեհի նստավայրը Բաբելոնն էր, և նրա երկրի սահմաններում էր Նինվե քաղաքը: Զրույցում Ներսեհը համարվում է պարսից արքա Արտաշիրի որդին⁶: Ասորեստանի անկումից հետո հույն և հռոմեացի պատմիչների ընկալմամբ Ադիաբենը մի երկիր է, որը գտնվում էր Օսրոյենից արևելք: Հայ հեղինակների համար Ասորեստանը նույնացվում էր Ադիաբենի թագավորության հետ, ինչը արտահայտված է Աբգարի գրույցում:

Ըստ Լարբուրնայի՝ Ասորեստանի արքա Ներսեհը առևտրականներից լսել էր Ադդեի հրաշագործությունները և Աբգարին խնդրում է ուղարկել նրան⁷: Մովսես Խորենացին այս դրվագը այլ կերպ է ներկայացնում, ինչը հետագա պատմական իրադարձությունների հետևանքն է: Այսպես՝ II դ. սկզբին Հռոմի կայսր Տրայանոսը իր արևելյան արշավանքի ժամանակ՝ 116 թ., Հայաստանից ու Միջագետքից հետո նվաճում է Ադիաբենի թագավորությունը և այն

¹ Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, **Հարությունյան Բ.**, Երևան, 2004, էջ 36, 38:

² Իր արևելյան արշավանքի ժամանակ Տրայանոսը, ի թիվս Օսրոյենի մյուս բնակավայրերի, նվաճում է նաև Բատնա կարևորագույն հենակետը (տե՛ս **Ross K.S.**, Roman Edessa, London-New York, 2005, p. 14-15, **Dio Cassius**, Roman History, vol. VIII, London, 1925, p. 401):

³ Տե՛ս **Ammianus Marcellinus**, The Roman History (Engl. Translation by Rolfe S. J.), vol. I, London, 1935, p. 25-27:

⁴ Տե՛ս **Egeria**: Diary of Pilgrimage, p. 77, **Chabot V.**, La frontière de l c. Euphrate de pompée à la conquête arabe, Paris, 1907, p. 195-196:

⁵ Ամենայն հավանականությամբ ռազմական դատարանների առկայությունը հատուկ էր Մովսես Խորենացու նշած գորանիստ գավառներին՝ բանակային խոշոր գործառնների գործունեությունը վերահսկելու համար:

⁶ Տե՛ս **Մովսես Խորենացի**, էջ 1904:

⁷ Տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 98, **Philips G.**, նշվ. աշխ., էջ 35-36:

դարձնում առանձին նահանգ՝ Ասորեստան անունով¹: 166 թ. պարթևների և հռոմեական կայսրության միջև պայմանագիր է կնքվում, որով Ադիաբենը և այլ տարածքներ վերադարձվում են Պարթևստանին²: Ասորի պատմիչ Մշի-խա Ջեխան վկայում է, որ Պարթևստանի Վաղարշ Դ արքայի օրոք (191-208) Ադիաբեն-Ասորեստանի արքան էր Ներսեհը կամ Նարսայը, որը դառնում է պարթևաց արքայի վրեժխնդրության զոհը³: Պատմիչի վկայությամբ՝ Ներսեհը քրիստոնյանների պաշտպանն էր, և նրա մահից հետո վերջիններս հալածանքների են ենթարկվում⁴:

Աբգարի գրույցում նշված Ներսեհը հավանաբար Վաղարշի վրեժխնդրությանը զոհ դարձած Ներսեհն էր, որը չի ապրել I դարում, այլ եղել է Եդեսիայի Աբգար VIII արքայի ժամանակակիցը, ինչը դարձյալ ապացուցում է, որ գրույցը առավելապես Աբգար VIII-ին է վերաբերում: Այստեղ նաև պարզ է դառնում, որ հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող Ասորեստանը վերաբերում էր Ադիաբեն երկրի տարածքին⁵:

Մովսես Խորենացին յուրահասուկ ձևով է նկարագրում նաև Աբգարի կողմից հեթանոսական մեհյանների փակման և քրիստոնեական դարձի տեսարանը. «*Եւ հաւատացին ամենեքեան. եւ մկրտեցաւ ինքն Աբգար եւ ամենայն քաղաքն. եւ գդուրս տաճարաց կոռցն փակեցին. եւ որ ի վերայ բազնին եւ սեանն պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամք. եւ ոչ զոք ածեր բռնությամբ ի հաւատս, բայց աւր ըստ աւրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային*»⁶: Փաստորեն Եդեսիայում մեհյանները չէին ավերվում⁷, իսկ քրմական ընտանիքները չէին բնաջնջվում. ամեն ինչ խաղաղ ու անարյուն էր: Այստեղ քրիստոնեությունը ընկալվում էր իբրև համախմբող գաղափարախոսություն և ընդունելի ու ճանաչելի էր թե՛ վերնախավի և թե՛ հասարակ ժողովրդի համար: Բացի այդ՝ կարող ենք արձանագրել, որ Եդեսիան դարձել էր կրոնական համերաշխություն ապահովող միջավայր:

Այսպիսով՝ Եդեսիայի Աբգար թագավորի վարքաբանական գրույցը պատմագիտական հարուստ նյութ է պարունակում: Այն կազմել է Մովսես

¹ Տե՛ս **Մելքոնյան Հ.**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 221:

² Տե՛ս նույն տեղում, էջ 161:

³ Տե՛ս **Մշիխա Ջեխա**, Ադիաբենի եկեղեցու պատմություն (Ասորական աղբյուրներ, հ. Ա), թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Մելքոնյան Հ.), Երևան, 1976, էջ 80:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Ըստ Մուրեն Երեմյանի՝ հայ պատմիչները Ասորեստան անվան տակ առաջին հերթին հասկանում էին Միջագետքի միջին և ստորին հատվածները (տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 38), սակայն այս գրույցը ցույց է տալիս, որ Ադիաբենը նույնպես ընկալվել է իբրև Ասորեստանի բաղկացուցիչ (տե՛ս նաև **Մելքոնյան Հ.**, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, էջ 222):

⁶ **Մովսես Խորենացի**, էջ 1900-1901:

⁷ Ըստ Ադդեի վարդապետության՝ քրմերը ինքնակամ ավերում էին գլխավոր աստվածներ Ներուի և Բեիի մեհյանները և կանգուն էին թողնում միայն կենտրոնական մեծ մեհյանը (տե՛ս Histoire du roi Abgar et de Jésus, p. 95):

Խորենացին և ներառել իր պատմության էջերում՝ նպատակ ունենալով ցույց տալ հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու առաքելական ծագումը: Զրույցը կրել է հայկական միջավայրի ազդեցությունը. տարբերություններն առաջացել են Մովսես Խորենացու պատմագիտական հայացքների, նրա ժամանակաշրջանի հոգևոր-քաղաքական ընկալումների, հասարակական կյանքի փոփոխությունների ազդեցությամբ:

Արգար թագավորի զրույցը մեծ մասամբ վերաբերում է Արգար VIII-ին, և ոչ թե Հիսուսի ժամանակակից Արգար V-ին: Հայկական զրույցը փոխարանում է Եդեսիայի մասին եղած անտիկ և վաղքրիստոնեական տվյալները: Դրանց զուգադրումով հնարավորություն է ստեղծվում առավել արդյունավետ ուսումնասիրել Եդեսիայի թագավորության պետական կարգը, հասարակական ու տնտեսական հարաբերությունները: Մովսես Խորենացին նաև եզակի տվյալներ է պահպանել առանձին գավառների ռազմավարական կարևորության մասին:



Նկար 1



Նկար 2

Шаварш Азатян – Легенда о царе Абгаре в «Истории Армении» Мовсеса Хоренаци

Легенда о царе Абгаре содержит богатый исторический материал. Она была изложена Мовсесом Хоренаци и размещена на страницах его «Истории» с целью показать самостоятельность и апостольское происхождение Армянской церкви. Воздействие армянской среды сказалось на формировании жития. Расхождения возникли из-за историографических взглядов Хоренаци, духовно-политического восприятия данной эпохи, изменений, происходящих в общественной жизни. Легенда о царе Абгаре связана с Абгаром VIII, а не с современником Иисуса Христа Абгаром V. Армянская версия восполняется имеющимися сведениями об античном и раннехристианском Эдессе. Их сопоставление предоставляет возможность более подробно изучить государственный строй и социально-экономические отношения Эдесского царства. Мовсес Хоренаци сохранил также уникальные сведения о стратегическом значении отдельных провинций.

Shavarsh Azatyan – *The Hagiographic Legend of the King Abgar in the “History of Armenia” by Moses of Khoren*

The legend of the king Abgar of Edessa contains rich historical material. It was compiled by Moses of Khoren and was included in his “History of Armenia” to show the autonomy and apostolic origin of the Armenian Church. The formation of the legend was greatly influenced by the situation of Armenia in the 5th century. The main differences arise from historiographic views of Moses of Khoren, the spiritual and political perception of his era and changes in public life. The legend of Abgar is mainly associated with Abgar VIII, not the modern king of Jesus Abgar V. This legend accomplishes the information about ancient and early Christian Edessa. It proves helpful to study more effectively the socio-economic relations and the state order in the kingdom of Edessa. Moses of Khoren also retained unique information about important strategic provinces.

Ներկայացվել է 25.11.2018

Գրախոսվել է 23.01.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019